ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացմամբ հայրենասիրության սերմանումը հայ գրականության դասերին

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Վեներա Ասրյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Շինուհայրի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

Գորիս 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1. Գրականության դասավանդման ընթացքում սովորողի ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման առանձնահատկություններն ու կարևորությունը 4

2. Անձի կենտրոնական հատկանիշների ձևավորման և հայրենասիրության սերմանման կապը՝ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի ուսուցման օրինակով 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

Օգտագործված գրականության ցանկ 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակները փոխվում են ու արագ են փոխվում: Եվ այդ հոլովույթում չի կորչում, շահում է նա, ով գիտելիքների պաշարի հետ ունի նաև որոշակի հմտություններ, ստեղծված իրավիճակում կշռադատելու, համադրելու և հակադրելու, ճիշտ և արագ կողմնորոշվելու կարողություններ: Մենք ունենք խնդիր կյանքին բազմակողմանիորեն պատրաստ, բարձր արժեքներ կրող մարդ տալու, թողարկելու:

Անհրաժեշտ է երեխաներին ոչ միայն առարկայական գիտելիքներ տալ, այլ նաև դարիս համահունչ քայլող, նոր մարտահրավերները քմծիծաղով ընդունող և հեշտ լուծող երիտասարդ դաստիարակել: Երիտասարդ, որ իր կյանքում կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել, իրադարձությունների շուրջ եզրահանգումներ անել: Ուստի մեր խնդիրն է հասնել այն բանին, որ հայ երեխան գնահատի, արժևորի ամեն հայկականը, իր ձեռք բերած կայուն հատկանիշներով՝ վերլուծելու կարողությամբ, նախաձեռնողականությամբ, ինքնուրույնությամբ, դառնա իր երկրի անձնվեր պաշտպանը, այն շենացնողը, միջազգային ատյաններում իր հայրենիքը ըստ անհրաժեշտության ներկայացնողը: Գրականության դասերը այնպես պիտի դաստիարակեն հայ տղային ու աղջկան, որ նրանք գործեն միմիայն հաղթանակներ տանելու մտքով, եթե հարցը վերաբերում է հայրենիքին, իսկ եթե վերաբերում է ընկերոջը, բարեկամին, նաև զիջելու:

Նկատի ունենալով վերոնշյալը, միևնույն ժամանակ գիտակցելով մեր հայրենիքի ծանր կացությունը՝ կարծում ենք այս համատեքստում առաջնային պահանջ է հայ մարդու մեջ հայրենասիրության արժեքի ձևավորումը, որը հնարավոր է իրականացնել անձի կենտրոնական հատկանիշների՝ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծարարության զարգացմամբ: Ահա այս հանգամանքով էլ պայմանավորված է թեմայի ուսումնասիրման **արդիականությունը**:

Հետազոտության **նպատակն է** հայրենասիրության արժեքի և անձի կենտրոնական հատկանիշների սերտ կապի գիտակցմամբ առաջարկել արդյունավետ մեթոդներ անկախ հայ քաղաքացու ձևավորման համար:

Առաջադիր նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- **որոշել** գրականության դասավանդման ընթացքում սովորողի ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման առանձնահատկություններն ու կարևորությունը,
- անձի կենտրոնական հատկանիշների զարգացմամբ **առաջարկել արդյունավետ մեթոդներ** աշակերտների շրջանում հայրենասիրության սերմանման համար՝ հենվելով Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի ուսուցման օրինակի վրա:

Հետազոտության **օբյեկտը** անձի կենտրոնական հատկանիշներից ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծարարության զարգացման գործընթացն է: Հետազոտության **առարկան** այդ հատկանիշների հետ սերտ կապակցված հայրենասիրական դաստիարակությունն է:

Հետազոտության խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, փորձի, ընդհանրացման և վերլուծության **մեթոդներ**:

1. Գրականության դասավանդման ընթացքում սովորողի ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման առանձնահատկություններն ու կարևորությունը

Ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, վերլուծական կարողությունները, ստեղծագործական ունակությունները հատկանիշներ են, որոնք անձի մեջ ձևավորվում են տարիների ընթացքում:

Սկսած հինգերորդ դասարանից (չհաշված տարրական դպրոցը)՝ ցանկացած դաս պետք է միտված լինի երեխային ոչ միայն գիտելիք տալուն, այլ նաև առաջին հերթին վերլուծական կարողություններ ձևավորելուն, օրինակ՝ հերոսի բնութագրական բոլոր գծերը տեսնելը, նրան ապրումակցելը, տարբեր կողմերից գնահատելը, իրեն նրա տեղը դնելը (ես ի՞նչ կանեի): Եթե երեխան կարողացավ բազմակողմանիորեն վերլուծել երևույթը, առարկան, նրա մեջ քիչ-քիչ կձևավորվեն ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը: Հետևաբար ուսուցչի

առաջադրանքները պետք է ուղղված լինեն դրանց խթանմանը: Դա նաև միջոց է երեխաների ապրումներին, մտքերին ծանոթանալու, նրան անհատապես ճանաչելու:

Քննենք մեր փորձից մի օրինակ: Վեցերորդ դասարանում մայրենիի դասին հանձնարարել էինք երեխաներին նկարել իրենց երազանքը՝ ապահովելով միջառարկայական կապ: Երբ սահմանված ժամանակի ավարտին երեխաները ներկայացնում էին իրենց աշխատանքը՝ պարզաբանելով նաև գույների ընտրությունը, մի տղա, որը այնքան էլ լավ չէր սովորում, ցույց տվեց իր նկարած մի քանի իրար կպած սև ու սպիտակ շրջանակներ: Նա ոչինչ չասաց: Երբ հարցրինք՝ ինչ է նկարել, ինչու միայն սև ու սպիտակ, նա պարզապես ասաց՝ չալո: Պարզվեց՝ նրա Չալո շունը սատկել է, և նա կարոտում է Չալոյին: Այս օրինակը ցույց է տալիս, որ նմանատիպ աշխատանքները խթանում են ինքնուրույնությունը:

Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են ներքին ազատությունը, որոշման կայացումը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքով, արժեհամակարգի ձևավորմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներ, սպասումներ և՛տարիքային տարբեր փուլերում, և՛կրթական տարբեր աստիճաններում:

Պետք է հասկանալ, որ պարտադրանքը, սեփական կարծիքի ու գաղափարի հարկադրումը դրական որևէ արդյունք չեն ունենալու, մասնավորապես եթե խոսքը վերաբերում է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը:

Դպրոցը երեխային պետք է տա այս կամ այն երևույթի մասին գործնական և ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձ: Որպես անձի գիտելիքների, կարողությունների, արժեքների և դիրքորոշումների փոխկապակցված համախումբ՝ կարողունակությունները ձևավորվում են ուսումնական գործընթացներում տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեությանը:

Ուրեմն սովորողի մեջ ինքնուրույն գործելու, որոշումներ կայացնելու, նախաձեռնողական վարք ձևավորելու համար առաջնային պայմաններ են հնարավորություն ստեղծելը, որ սովորողը կարողանա որոշում կայացնել,

պատասխանատվության գիտակցում ձևավորելը, որ աստիճանաբար ձգտի կայացման ու ձեռքբերումների:

Սովորողների ձեռքբերումների գործում մեծ դեր ունի ուսուցիչը: Առաջին հերթին մենք՝ ուսուցիչներս, պետք է լինենք լավ զինված թե՛ գիտելիքներով, թե՛ հմտություններով: Մենք պետք է վերլուծելով ընդունենք նորը և հնի լավի, առաջավոր փորձի վրա հիմնենք նորը, քանի որ ցանկացած նոր ժամանակ իր հետ բերում է նոր ձևեր: Հին ու նոր մեթոդները համադրելով՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է հասնել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին՝ խթանելով սովորողների ինքնուրույն գործելուն, նախաձեռնող և նորարար լինելուն և ստեղծագործաբար գործելուն:

Ժամանակակից կրթության հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող սերնդի ձևավորումը: Այս մարտահրավերներով են պայմանավորված նաև ՀՀ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները: Հենց այս կարողությունների ձևավորմամբ է պայմանավորված մարդկային առաջընթացը: ՀՀ հանրակրթության համակարգը կարգավորող փաստաթղթերը պահանջում են աճող սերնդի ստեղծագործական ներուժի դրսևորման հնարավորությունների ընդլայնում հասարակության հոգևոր-բարոյական և գեղագիտական արժեքների հիման վրա:

Բոլոր երեխաներն առանց բացառության տաղանդավոր են: Յուրաքանչյուր երեխային բնորոշ ստեղծագործական սկզբունքի արթնացումը, ստեղծագործական առաջին քայլերն անելուն օգնելը հեշտ գործ չէ: Պետք է ստեղծվի այնպիսի միջավայր, որում հնարավոր լինի զարգացնել սովորողի ստեղծագործական կարողությունները:

Յուրաքանչյուր երեխա ցանկանում է ստեղծագործել: Ուսուցիչը պետք է փորձի սովորողի մեջ արթնացնել ստեղծագործական բնածին կարողություններ, սովորեցնի, թե ինչպես պետք է աշխատել: Առանց ստեղծագործելու սովորելը տաղտկալի է: Առաջնորդելով ստեղծագործական կարողությունների աշխարհ՝ մենք կզարգացնենք բացառիկ ունակություններ:

Ինքնուրույնության պահանջմունքը պատանեկան տարիքում մտնում է զարգացման նոր մակարդակ: Այդ տարիքում ինքնավարությունը ունի մի շարք առանձնահատկություններ: Նախ՝ այն դրսևորվում է որպես ծնողների խնամքից

դուրս գալու ձգտում, ցանկություն: Պատանիները խիստ վիրավորվում են, եթե ծնողները փորձում են հուշել, թե նրանք ինչ պիտի անեն, ինչ հագնեն, երբ տուն գան, հատկապես եթե դա արվում է ընկերների մոտ: Պատանիները միմյանց ծաղրում են, եթե խիստ կախված են ծնողներից: Երկրորդ՝ ինքնավարության պահանջմունքի արտահայտություն է հասուն կյանքում իրականության մեջ ինքնուրույն կողմնորոշվելուն ուղղված պատանիների ձգտումը: Այս տարիքում է, որ պատանիները ձևավորում են արժեքային համակարգ, ցանկանում են գտնել իրենց տեղը կյանքում, ուրվագծել իրենց կյանքի ծրագիրը: Երրորդ՝ պատանիները ձգտում են ինքնուրույն ապրել. որոշները սկսում են աշխատել, շատերը, հաճախ ընտանիքի կամքին հակառակ, զուգընկեր են գտնում և համատեղ ապրում: Այս տարիքն Արևմուտքում բնութագրվում է որպես բունը լքելու տարիք: Տղաների և աղջիկների մեջ ինքնուրույնության պահանջմունքն ու դրսևորումները տարբեր են: Տղաները ձգտում են ֆինանսական անկախության, աղջիկները՝ ավելի շատ սեփական ընտանիքն ունենալուն: Սա թերևս ազգային առանձնահատկություն է:

2. Անձի կենտրոնական հատկանիշների ձևավորման և հայրենասիրության սերմանման կապը՝ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի ուսուցման օրինակով

Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ու՞ր ենք գնում:

Մենք հայ ենք, մեր երկիրը Հայաստանն է, գալիս ենք հազարամյակների խորքից և գնում ենք դեպի ապագան:

Տարիներ, դարեր շարունակ մենք գովերգել ենք Աստծուց մեզ բաժին հասած այս փոքրիկ աշխարհը: Քառասունչորսօրյա պատերազմի ողջ ընթացքում մեր մտքում հանճարեղ Չարենցի խոսքերն էին.

….Եվ հավատացինք հարբած ու գինով,

Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի…

Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով

Մեր երկիրը հին դարձրին փոշի…

Կատարվածի հետևանքով հասկացանք մի բան, որ մենք պիտի հին փառքով չտարվենք, միշտ զգոն ու պատրաստ լինենք, որ չնահանջենք, որ չկորցնենք…

Հայը միշտ գաղթել է, երբեմն՝ հարկադրված, երբեմն՝ կամովի: Երբ սեպտեմբերի տասներեքին թուրքը էլի ոտնձգություն արեց, որոշները թողին ու հեռացան իրենց կաշին փրկելու համար: Վերադառնալուց հետո կողքից լսում էինք երեխաների զրույցները. նրանք քննադատում էին փախչողներին՝ հասկանալով, որ փախուստը նահանջ է, և հողը թողնողը նահանջում է նաև ազգային արժեքներից:

Այս իրադարձությունները ևս մեկ անգամ փաստեցին, որ դպրոցն այն տեղն է, որում պետք է ինքնուրույնության՝ իբրև անձի հավաքական հատկանիշի զարգացման ժամանակ շեշտը դնել նաև հայրենասիրության սերմանմանը հայրենիքին վիճակված ընթացիկ մարտահրավերները ինքնուրույնությամբ, նախաձեռնողականությամբ և ստեղծարարությամբ աչքի ընկնող քաղաքացիների օգնությամբ հաղթահարելու համար:

Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը լավագույն գործերից է, որը վերլուծելով՝ սովորողի մեջ կձևավորվի կամքի մեծ ուժ՝ պայքարելու իր ազգայինի, իր հայրենիքի համար:

Առհասարակ ցանկացած ստեղծագործություն խորությամբ ըմբռնելու, վերլուծելու և ճիշտ գնահատականներ տալու համար նախ և առաջ պետք է պատկերացում կազմել վեպում ներկայացված ժամանակաշրջանի մասին: Քննվող վեպում պատկերված են 20-րդ դարասկզբին հայ ժողովրդին բաժին հասած ողբերգությունից հետո Փարիզում հայտնված հայ երիտասարդների ճակատագրերը: Շահնուրի վեպը հայությանն ուղղված զգաստացման կոչ էր: Այդ վեպով նա առաջինը տագնապահար հնչեցրեց սփյուռքահայերի ձուլման վտանգի ահազանգը և իր՝ զգոնություն հրավիրող հարցադրումներով հասարակության ուշադրությունը սևեռեց այդ երևույթի վրա: Շահնուրը վեպի հերոսներ է դարձրել երիտասարդներին. նրանք կարող են նոր բարքերի զոհ գնալ, նոր կյանքի հրապույրները, հետաքրքրությունները, «ազատ» կյանքը հիմնովին կարող են փոխել նրանց կյանքի ընթացքը, շեղել ազգային ավանդներից: Շահնուրի վեպը ազգային լինելով հանդերձ, համամարդկային է. այն պատկերում է 20-ական թվականների փարիզյան կյանքը՝ իր բարդություններով, անբարոյական, դրամատիրական, մարդկային այլազն հարաբերություններով:

Այսօր էլ նահանջը իրողություն է, և, ցավոք սրտի, նահանջող է ոչ միայն սփյուռքահայությունը, այլև իր հայրենիքում՝ մայր հողի վրա, ապրող հայ մարդը: Եվ, ցավոք, այսօր էլ մեր կողքին, մեր մեջ ապրում են Շահնուրի ստեղծած կերպարները:

Քանի որ վեպը շատ արդիական է (հիմա էլ արտագաղթը Հայաստանից, նահանջը ազգայինից մեծ չափերի է հասնում), փորձենք դրա ուսուցմամբ երեխաների մեջ արթնացնել սթափ դատողություն, հայրենիքին պատուհասած վտանգը տեսնելու կարողություն և ինքնուրույն դատողություններ, եզրահանգումներ անելու ունակություն ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Ամենից շատ ես ուզում եմ նրանց բռնկել հայրենասիրության հրդեհով:

Այսպես՝ անհրաժեշտ է դասարանը բաժանել 4 խմբի և յուրաքանչյուրին տալ հետազետական աշխատանքի համար առանձին թեմա:

Առաջին խումբը պետք է ուսումնասիրի 20-րդ դարասկզբի իրադարձությունները, դրա պատճառով Սփյուռքի առաջացումը: Խումբը կարող է օգտվել համացանցից, զրուցել պատմության ուսուցչի հետ:

Երկրորդ խումբը պետք է ուսումնասիրի Սփյուռքում ապրող հայերի կենսակերպը՝ հենվելով սեփական գյուղից հեռացած և արտերկրում (Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Հոլանդիա) ապրող անձանց փորձի վրա, նրանց հետ կապ հաստատի՝ որոշակի հարցադրումներ անելու.

-ինչպե՞ս են վաստակում,

-սիրու՞մ են այդ երկրի սովորույթները,

-երեխաները դպրոցում որևէ խնդիր ունե՞ն,

-երեխաները հայերեն խոսո՞ւմ են,

-հայկական տոներին, սովորույթներին հետևո՞ւմ են,

-մի՞տք ունեն Հայաստան գալու և այլն:

Երրորդ խումբը փորձում է վեպի երիտասարդների արարքներին հետևել և մեկնաբանություններ անել: նրանցից յուրաքանչյուրը կխոսի որևէ հերոսի անունից, կմեկնաբանի իր արարքները: Հետո նույն աշակերտը կասի՝ ինչ կանի ինքը, եթե հայտնվի նույն վիակում:

Չորրորդ խումբը պետք է պրպտի, գտնի իր շրջապատում կամ ուրիշի պատմածից հայ ընտանիքների կամ անհատների (Հայաստանում ապրող), որոնք

իրենց կյանքից դուրս են մղում հայկականը՝ բերելով օտարը: Աշակերտները պետք է փորձեն հարցազրույց անցկացնել նրանց հետ:

Խմբերը իրենց մեջ աշխատանքը բաժանում են: Որոշ ժամանակ անց ներկայացնում են աշխատանքները, քննարկում, վերլուծում: Աշակերտներին հնարավորություն է տրվում ինքնուրույն աշխատանք կատարելու, հետո դա խմբի անդամների աշխատանքների հետ համադրելու, ընդհանուր հայտարարի գալու: Սովորողները իրենք են նախաձեռնում՝ ինչպես կապվեն համագյուղացիների հետ, ինչպես հարցազրույց վարեն՝ հենվելով իրենց ստացած գիտելիքների վրա: Նրանք ազատ են թե՛ կերպարներին, թե՛ հավաքած տեղեկությունը վերլուծելիս, թե՛ եզրահանգումներ անելիս: Դասի ժամանակ յուրաքանչյուր խումբ ներկայացնում է արված աշխատանքը: Ներկայացման ձևերը խմբի անդամներն են ընտրում՝ պաստառներ, սահկաշարեր, երկխոսություններ, փոքրիկ ներկայացում և այլն: Խոսում են աշխատանքի ընթացքի, հանդիպած դժվարությունների, թույլ կարողությամբ երեխաներին ներգրավելու եղանակների մասին: Այնուհետև խմբերը գնահատում են մյուս խմբերին, նաև խմբի ներսի անդամներին:

Հաջորդ ժամի համար, քանի որ երեխաները նյութը արդեն լավ գիտեն, ուսուցիչը դասարանը բաժանում է երկու խմբի՝ հանձնարարելով պատրաստվել բանավեճի «Ազգային արժեքները կարևոր են, և պետք է պահպանել այն ցանկացած իրավիճակում» և «Եթե անհրաժեշտ է հրաժարվել ազգայինից» պնդումներից որևէ մեկով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ կարելի է հետևյալ եզրահանգումներն անել.

- Անձի ամբողջական զարգացման գործընթացում էական դեր ունի ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծարարության ձևավորման շեշտադրումը:
- Դպրոցը երեխային պետք է տա այս կամ այն երևույթի մասին գործնական և ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձ, որում նաև մեծ է ուսուցչի դերակատարությունը:

- Խնդրո առարկա հատկանիշների ձևավորմանը նպաստող գործողություններ կարելի է իրականացնել նաև «Հայ գրականություն» առարկայի շրջանակներում։
- Շատ կարևոր է առարկայի ուսուցման գործընթացում զարգացվող հիշյալ ունակությունները ծառայեցնել սովորողների մեջ հայրենասիրության սերմանմանը և հայրենանպաստ գործունեության կարևորության գիտակցմանը։

1. Նշյալ կարողությունների զարգացման արդյունավետությունը հնարավոր է ապահովել կրթական գործընթացում անհրաժեշտ մեթոդիկայի կիրառման և համապատասխան միջավայրի ստեղծման պայմաններում, ընդ որում՝ այդ առումով անհատական և խմբային առաջադրանքների համադրումը լավագույն տարբերակներից է։

Օգտագործված գրականության ցանկ

1. Պապոյան Վ., Գալստյան Ա., Սարգսյան Դ., Մուրադյան Ե., Սովորողի ինքնուրույության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, Երևան, ԵՊՀ հրատ., 2017։
2. Ս. Խուդոյան, Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, Զանգակ 97, 2004։